

ԿԸՆԸՆՑ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ¹⁾

Կանանց ղրութիւնն Ամերիկայում.

Թէև Ամերիկան նոր աշխարհ է համարւում և իր քաղաքակրթութեամբ Եւրոպալից նոր, բայց և այնպէս կան բաներ, որոնցով նա Եւրոպալին գերակշռում է, այնպէս որ, որչափ Ամերիկալի նախկին բնակիչներն իրանց հիմնարկութիւններով, բնաւորութեամբ, սովորութիւններով, նիստ ու կացով տարբեր էին Եւրոպալից, կարելի է ասել ամերիկուհին այնչափ էլ իր քոյլ Եւրոպական կնոջից տարբերում է թէ իր բնաւորութեամբ, թէ ընտանիքի մէջ ունեցած դիրքով, և թէ հասարակական և տնտեսական պայմաններով։ Այն ինչ Եւրոպայում կինը գիտնական հետազոտութեան նիւթ է գտառել, նրանց մտաւոր, Փիզիքական ընդունակութիւնները չափում, ձեռում, համեմատում են, նրա համաձայն էլ օրոշումներ են կայացնում, սրա հակառակ Ամերիկան գործին այլ տեսակէտով է նայում։ Նրանք կանանցը մարդկանց հաւասար են համարում և ամեն մասնագիտութեան ու գործի մէջ ազատ ասպարէզ են տալիս, այնպէս որ կինն Ամերիկայում բոլորովին ազատ, ինքնուրոյն է և իր ոլժերով առաջ գնացող։

Թէ ինչու ամերիկուհին այնչափ իրաւունքներ է վայելում, դրա պատճառը պէտք է որոնել նախկին ամերիկուհիների պատմական դրութեան և հանգամանքների մէջ։ Հէնց սրանք հիմք դրին և առաջ բերին ներկայ Ամերիկուհու անկախ և ազատ դրութիւնը։ Պատմութիւնից յայտնի է, որ XVI և XVII դարերում անգլիական ժողովրդի և կառավարութեան մէջ մեծ

1) Տես «Լումայ» № 4.

իրարանցում, խռովութիւններ առաջ եկան։ Ստիւարտների ցեղից յառաջ եկած կաթոլիկ թագաւորներն իրենց նախարարների և կաթոլիկ կղերի դրդմամբ ամեն տեսակ տանջանք, հալածանք յարուցին եպիսկոպոսական, բողոքական և պարզակրօններին պատկանող ժողովրդի դէմ և ալս աղմուկը մերթընդմերթ սաստկանում, ուուր կերպարանք էր ստանում։ Այդ պատճառով ժողովուրդը, առաջաւոր, ազատ մտածող դասակարգք, մինչեւ անգամ վաճառականները ծանր հարկերից ստիպուած՝ ժամանակ առ ժամանակ իրանց հանգստութեան համար գաղթում էին Նորաշխարհի ալս կամ ալն մտսը, և փոքրիկ գաղթականութիւններ էին հիմնում։ Առև տեսակ գաղթականութիւններ տեղի ունեցան, երբ պառլամենտի և թագաւորի մէջ եղած կոիւնները շարունակուեց, մանաւանդ երբ Ստիւարտներին տապալեցին և եպիսկոպոսական եկեղեցու պատկանողները նոյնպէս հալածանք մղեցին միւս կրօններին պատկանող համալնքների դէմ, ընականաբար ամենից շատ տուժողը եղան պարզակրօնին հետևողները։

Գաղթականներն ամենքն էի ճնշուած էին։ Նրանք կրօնական, քաղաքական և անհատական ազատութեան ձգտողներից էին, և ահա ալդ դժգոհ տարրը գտաւ մի աշխարհ, ուր կարելի էր ամեն բան անել, տսել, քարոզել, պաշտել և վաճառականութիւն անել, իսկ աշխատաւոր դասակարգի առաջ բացուեցին Ամերիկալի պըտղաբեր և արգաւանդ դաշտերն ու տափաստանները։ Ի՞նչ արին ալս ժամանակ կանալք, Նրանք իրանց տանջուած և հալածուած ամուսիններին հաւատարիմ ընկերեղան, երկար և վտանգուոր ծովալին ճանապարհորդութեան ժամանակ նեղութեանը մասնակից, ընութեան արհաւերքների դէմ ամուսինների հետ միասին կոռուող, աղօթող, օգնող հանդիսացան։ Ալսպէս չարչարանքներով հասան Նորաշխարհ և այստեղ էլ իրանց ամուսնուն ամենամտերիմ և հաւատարիմ գործակիցն եղան, թէ տուն շինելու մէջ, թէ տեղական վալրենիների դէմ պաշտպանուելու ժամանակ. մի խօսքով կինն ալս մարդու և քաջալերողն էր պատերազմի, ընտանիքի պաշտպանութեան գործում և թէ հողեպէս ու բարոյապէս

միսիթարիչը։ Կինն էր, որ առաջին անգամ կրօնական արքավայրեր հիմնելիս մարդու հետ հաւասար աշխատում էր և օգնում, նոյնն արաւ կինը առաջին անգամ գրել կարգալ սովորելու համար տեղեր պատրաստելիս։

Այսպէս կինն իր առաջին գաղթականութեան օրից սկսած ալր մարդուն միշտ օգնական, պահապան, ազօթող և գորեղացնող էտկը հանդիսացաւ։ Այսպէս էլ մասնակից եղաւ հասարակաց առաջին հիմնարկութիւններ հիմնելիս, այսպէս եկեղեցի, ուստի սումնարան և ալլին։ Այսպիսի հանգամանքներում շատ բնական է, որ մարդիկ կամալ ակամալ իրենց կանանց պիտի գնահատեին, հաւասարութեան և ամեն բանի մասնակցելու թուլաւութիւն տալին։ Այս բանը սովորական դառնալով, հետզհետէ սրբագործուեց և ժառանգաբար էլ մէկ-մէկու տալով, վերջը կանանց այսօրուայ ազատ գրութեանը հասցրեց, դեռ այս ամենը չէ, ամերիկուհիք իրանց ամուսիններին զօրեղ կերպով օգնութեան հասան մի ուրիշ դէպքում կս։ Ամերիկայի ազատութեան խնդրում ամերիկուհին կռուեց, չարչարուեց, նեղուեց և ժամանակ աւժամանակ մարդուն գերազանցեց։ Կինն այսմեղ հերոսաբար ամենաեռանգուն կերպով այդ սուրբ գործին ձեռնարկեց։¹⁾ Այս ժամանակներում որովհետև Անգլիայից հիւսիսային Ամերիկա ապրանքներ չէր տարւում, դրա համար հագուստի և այլ բաների խիստ կարիք կզգացուէր, եթէ ամերիկուհիք անխոտիր կերպով չձեռնարկէին թել մանել, սպիտակեղէնի, շորի և այլ բաների համար նիւթեր պատրաստել։ Նրանք ծախում էին իրենց թանգարին զարդարանքները, իրերը և զօրքի համար զէնք ու այլ կարևոր մթերք էին ձեռք բերում։ Նատ տեղերում ընտանեկան մետաղեալ գործիքները, կարասիները հալելով՝ գնդակներ էին ձուլում, զօրքի համար շորեր և այլ հարկաւոր նիւթեր էին պատրաստում։ Կանանց մարդկանց խրախուսողն էին, իսկ աղջիկները մերժում էին իրենց սիրելիներին, մինչեւ որ իրենց պատուի պաշտպան պատերազմից պատուով չդառնալին կամ փառաւորուէին։ Գալով հիւսիսդների խնամատարութեան,

¹⁾ Ամերիկանց XVI վ.

սրա մասին խօսել անգամ չե կտրելի, քանի որ ալդ-
շատ կանոնաւոր և ոգեսրիչ կերպով էր առաջ գնում:
Թէ կանանց ազգեցութիւնը տղամարդկանց վրայ որչափ
մեծ էր, ալդ երկու խօսքով լալտնում է պատերազ-
մում մասնակցող, ապա նախագահական աթոռի վրայ
նստող Զօն Աղամսի երկառողը՝ կնոջն ուղղած. «Ես չեմ
կարծում թէ անգլիական զօրավարի՝ Նօվէի կինը մեծ
է. եթէ նրա կինը գործունեալ լինէր, նա վաղուց Ֆի-
լադելֆիան տիրած կը լինէր»: Ալսպէս էր սսում, որով-
հետեւ Անգլիացիք իրենց կանոնաւոր զօրքով չկարողա-
ցան մի բուռն քաջերի լաղթել և քաղաքն առնել: Սը-
րա հակառակ ամերիկական կանութեալ իրանց ամուսինե-
րին միշտ քաջալերելով՝ ոյժ տալով, Անգլիացիք լամառ-
ընդդիմադրութեան էին պատահում, որովհետեւ կանացի-
ալդ կախարդական ոյժ ներշնչող զօրութիւնից Անգ-
լիացիք զուրկ էին:

Ալսպէս ամերիկուհին որչափ մեծ էր իր լեզափո-
խական և ընտանեկան գործի, այնչափ պարզ է իր սո-
վորութիւնների և շարժումների մէջ, ամերիկուհին
նոյնպիսի գործունեալ եռանդ է ցոյց տուել ստրկու-
թիւնը վերջացնելու գործում: Ալսպէս ահա ամերիկու-
հին միշտ և ամեն ժամանակ համահաւասար կերպով
օգնել է իր ընկեր մարդուն, նրա ցաւերով տանջուել
և ուրախութեամբ ուրախացել: Մի խօսքով պատմական
հանգամանքները, տեղի ու կիմալի պահանջները ա-
մերիկուհուն բոլորովին ալլ դրութեան մէջ դրին և ալ-
սօր ամերիկուհիք վայելում են իրենց նախորդների ա-
րիւնքքրտինքով ձեռք բերած հաւասարութիւնն ու ա-
զատութիւնը:

Ամերիկուհու հերոսական և ասպետական վեհանձ-
նութիւնը միշտ և ամեն ժամանակ երեսում է հասա-
րակական, ընտանեկան շրջաններում, դատարաններում,
հիւրանոցներում, կրպակներում, զոգենաւերում և ալլ
տեղերում: Ալս բանի մասին աւելի մանրամասն տեղե-
կութիւններ է տալիս Բրայսը. «ոչ մի տեղ, ասում է
նա, տիկնալիք, մանաւանդ օրիորդներն այնչափ բաղ-
տաւոր չեն ապրում, ինչպէս Ամերիկայում»:

Հաւասարութիւնը կարծես սահմանուած է նրա

բարոլականութեան համար։ Հայր, մալր, եղբալր, մօրաքոլր, բարեկամներ ևալլն, իրենց ցանկութիւնն ու ճաշակը նրանց են յարմարեցնում։ Ամուսնացած ջահել կինն աշխարհալին զուարճութիւններից անհամեմատ աւելի քիչ է օգտում, որովհետև այնտեղ ծառաների թանգութեան և դանդաղկոտութեան պատճառով, նա աւելի ընտանեկան գործերի շրջանի մէջ է ամփոփուած, քան եւրոպացի կինը, (բացառութիւն են կազմում հարուստ դասակարգի կանալք)։ Բրայսը նոյնայս հաւատացնում է, որ ամուսնացած կանանց դրութիւնն ընտանիքի մէջ անհամեմատ աւելի բարձր է, քան Ան գլխական և Թրանսիական կանանցը։ Գերմանական կանանց հետ համեմտել անգամ չի կարելի, քանի որ այնտեղ կինը միանգամայն հպատակ է մարդուն։

Բրայսն իր տուացքերած փաստերը հիմնում է նրա վրայ, թէ Անգլիայում կինն առհասարակ աշխատում է իր զուարճութիւնների համար, իինի նա այցելութիւն, ճանապարհորդութիւն, որևէ առարկայ գնելու մէջ ևալլն, մի խօսքով նա ամեն կերպ աշխատում է ամուսնու ճաշակին համաձայնուել, այն ինչ Միացեալ Նահանգներում ընդհակառակը մարդու պարտառը թիւնը, պատուասիրութիւնը իւր կնոջ ճաշակին յարմարուելու մէջն է, և այնպիսի ծառայութիւն է ցոյց տալիս, որպիսին Անգլիացին կնոջիցն է սպասում։

Մի ուրիշ տեղ Բրայսը նկատում է. «Եթէ մինչև անգամ եւրոպացի կինը իր հասարակական դիրքով, խելքով և զարգացմամբ եւրուցացի պարոնին գերազանցել է, այնու ամենայնիւ վերջինս որպէս տղամարդ, իրան բարձր է համարում, և այդ նրան զգացնել է տալիս։ Այն ինչ այդ տեսակ մտածմունք Ամերիկացու գլխում առաջ չի գալ, որովհետև նա կնոջ հետ խօսում է որպէս իր հաւասարի հետ։ Ամերիկացին կնոջը մեծ յարգանքով է վերաբերուում և այնպիսի նիւթ է ընտրում խօսակցութեան, որ կնոջն էլ հետաքրքրում է, և այդ քանի մասին խօսում, դատում է այնպէս, ինչպէս կանէր մի տղամարդու հետ խօսելիս։ Ալդպիսի դէպքում ամերիկուհին էլ չի սպասում, որ իր խօսակի-

ցը իրեն զբաղեցնէ, այլ նա պարտք է համարում քաղաքավարի, ասող, խօսող և դուրեկան լինել:

Ամերիկունու մտաւոր յառաջադիմութիւնը.

Այս ինչ Եւրոպական երկրներում կանալք մինչեւ վերջին ժամանակներս հաղիւ հազ հնարաւորութիւն ունեցան մի քանի բաների մէջ ազատութիւն ստանալ, սրա հակառակ ամերիկուհիք ոչ թէ գործարաններում, կրպակներում և այլ տեղերում ծառայութեան իրաւունք ունեցան, այլ և համարեա ամեն մի պետական, հասարակական ծառայութիւնների մէջ կարող են մըտնել, գործել: Ալդ բանի համար ամերիկուհին աշամարդկանց չափ՝ պատրաստութիւն ունի: Ամերիկայում քանի գնում է, բարձրագոյն կրթութիւնն ընդհանրանում է: Այս բանը կարելի է տեսնել նրանից, որ միայն արեմտեան պետութիւնների մէջ 190 կոլեջներ և համալսարաններ գոյութիւն ունեն. ալդ հիմնարկութիւնները գիտնական աստիճաններ տալու իրաւունք ունին: Դրանցից 165-ը երկու սեռի ուսանողներին է իրաւունք տալիս: Բացի դրանից մասնաւորապէս միայն կանոնց համար 47 կոլեջներ գոյութիւն ունին, որոնցից 30-ը նոյն բարձրագոյն ուսումնարանի աստիճան կարող է տալ: Միայն նիւ Եօրկի նահանգում 390 բժշկուհի գործնական աշխատութեամբ են պարապում: Միշիգանի համալսարանի 1500 ուսանողներից 500-ը կին են: Ֆիլադելֆիայում և նիւ-Եօրկում կան կին բժիշկներ, որոնք տարեկան 80—100 հազար ֆրանկ են աշխատում ևալին: Այսչափ բարձրագոյն դպրոցներին ուսանողներ հասցնելու համար շատ պարզ է, դրա համար էլ կան համապատասխան միջնակարգ դպրոցներ. և իրաւ սրանք Ամերիկայում աւելի մեծ ծառալ են բունում և շատ տարածուած են: Սկզբում, երբ ամերիկուհիք պատրաստական դասընթացքով չբաւականացան, նրանց ցանկութեան համաձայն էլ թոյլ տրուեց կոլեջները մտնելու և ահա կարճ ժամանակից յետով կոլեջները երկու սեռի դարձան: Այստեղ պէտք է պատրաստուէին միջնակարգ դպրոցների համար վարժուհիք և վարժապետներ. դրա

մանկավարժական դասնթացները հետզհետէ աւելի ու աւելի յառաջ գնացին ու ընդարձակուեցին։ Այս կողմից գերմանական մանկավարժական գիտութիւնը, պատրաստի ու կանոնաւոր նիւթի մշակումն ու մեթոդը շատ օգնեց։ Հենց այսօր էլ ամերիկուհի ուսանողուհիներ, գերմանական մանկավարժական կենդրոնները լցուածեն և աշխատաւոր, ժրաշան մեղուների նման առատ նիւթեն տանում իրենց երկիրը՝ Ամերիկան։ Կանանց տղամարդկանց հետ միասին կրթուելու և նոյն իսկ բարձրագոյն կրթութեան օգուտն արդեօք կանանց համար յարմար է և մի որոշ նպատակի կհասցնէ, — այս բաների մասին երբեմն այնտեղ էլ մամուլի մէջ հարցեր ծագեցին։ Եղան մարդիկ, որոնք պնդում էին, թէ կանայք չեն կարող աղամարդկանց չափ արդիւնք ցոյց տալ։ Ահա այս և սրանց նման հարցերի մասին դիմումներ եղան զանազան բարձրագոյն դպրոցների կառավարիչներին, որոնցից շատ նպաստաւոր տեղեկութիւններ ստացուեցին։ Ալսպէս օրինակ Ալբերտ կօլէջի նախագահը բոլոր երկու սեռի կօլէջների տեսուչներին դիմեց որ իրենց հսկողութեան տակ ուսանողների արդիւնքի մասին հազորդեն։ Նոյն բանն արաւ 1884 թուին, կանանց կը թութեան մասին նշանաւոր գրող մի հեղինակ։ Երկուսն էլ 200-ի չափ նամակներ ստացան, որից երեսում է, որ բոլոր տեսուչներն էլ երկու սեռի կօլէջների կրթութիւնը շատ նպաստաւոր են համարում։ օրինակ Միչեգանի տեսուչը գրում է. «Մեզանում կանայք համարեա բոլորն էլ ուսուցչապետների և ժողովրդի կարծիքին հակառակ մտան համալսարան, չնայելով դրան՝ այսօր ոչ մի ուսուցչապետ չէ զղացել նրանց ընդունուելու համար։ Կանանց մասին եղած աննպաստ նախագուշակութիւնները չարդարացան, մենք մեր կանոնների և պահանջների մէջ ոչ մի փոփոխութիւն չարինք և կարիք էլ չզգացինք։ Նրանք երբէք իրենց կանացիութիւնը չկորցրին. ուսումը շատ յաջող կերպով է յառաջ գնում։ Առանց վնասուելու, բոլոր ուսանողուհիներն էլ շատ լաւ կերպով իրանց դասընթացները վերջացրին։ Նրանցից 6—7ն արդէն պրօֆեսորի պաշտօն ունին ստացած, իսկ մէկը մինչև անգամ նոյն կօլէջի տեսչուհի է»։

Կօլնելեան համալսարանի պրօֆ. Մ. Տայլեօր գը-
րում է. «ստանալով ձեր նամակը՝ զարմացար, որ դեռ
մարդիկ կան, որոնք կասկածում են երկու սեռի անդամնե-
րի միասին սովորելու օգտակարութեան մասին։ Զէ որ
երկար տարիների փորձերը դրա նպատակալարմաբու-
թիւնն արգէն ցոյց են տուել։ Զկարծեմ թէ այժմ ո-
րեւէ պաշտօնական անձնաւորութիւն ցանկանալ հին
կանոններին վերադառնալ և կանանց մասնակցելուն
ընդդէմ լինի։ Որքան նկատել և դիտել եմ, այժմ կո-
ւչզի ընդհանուր կերպարանքը փոխուել, բարձրացել է։
Այժմ աւելի քաղաքավարութիւն, համեստութիւն,
վալելուչ վարք ու բարք է նկատում։ Կանսոք մեր
ամենալաւ ուսանողներն են համարւում, և ոչ թէ տղա-
մարդկանցից լետ են մնում, այլ երեմն նրանցից անց-
նում են ևալլն»։

Մի ուրիշ համալսարանի վերատեսուչ գրում է։
«կանանց մասնակցութեամբ պարապմունքները երբէք
չխանգարուեցին, այն ինչ կարգ ու կանոնը կարծես
աւելի լաւացաւ, ոչ մի անկանոն բան չէ պատահել և
չէ կարելի ասել թէ սիրային լարաբերութիւն նկա-
տուած է»։

Վինօկնօնափնեան համալսարանի վերատեսուչը գը-
րում է. «սերունդների մէջ այլ ևս ոչ մի տարածայնու-
թիւն չկայ, բոլորն էլ կանանց մասնակցութեան լաւ
ազդեցութիւնն ու օգտակարութիւնն ընդունում են։
Մեր կանսոք շատ լաւ են աշխատում, իսկ դրանցից աը-
դաների լաջողութիւնը չէ պակասել, մեզ թւում է, որ
այս հարցն արդէն վճռուած պիտի համարել»։

Հարաւ-արևմտեան համալսարանի մի վերատեսուչ
գրում է. «միասին ուսանելու պատմութիւնն ապացու-
ցանում է, որ երկու սեռը միասին կրթուելով՝ աւելի
քիչ են ենթարկում կրքերի, քան նրանք, որոնք ա-
ռանձին են կրթուում։ Նոյն լաջող հետևանքների են
հասել և հարաւոյին նահանգի կտոռավարիչները»։

Ահա ալսպիսի լաջողութեան է հասել կանանց
բարձրագոյն ուսում ստանալու խնդիրն Ամերիկալում։
Այն ինչ ծերոպալայում այս դեռ. հարց է, իսկ երևակալարկան
բան Գերմանիայում։ Ֆրանսիայում թէև սկզբունքով

ընդունուած է, բայց թոյլ դրութեան մէջ է։ Ամերիկայում այս հարցն այլևս գոյութիւն չունի և կանանց բարձրագոյն կրթութիւնը համարուում է նոյնքան անհրաժեշտ և բնական բան, որքան առհասարակ կրթութիւնը։ Կասկած չկալ, որ կանալք իրանց վայելած արտօնութիւններով բարձր ուսման են պարտական, և դրանով էլ վայելում են տղամարդկանց յարգանքը։

Ամերիկական կանայք։

Ենորհիւ ամերիկուհու բարձր կրթութեան, նրա առաջ գործելու բազմաթիւ ասպարէզներ բացուեցան։ Արդէն իմացանք, որ նրանք մանկավարժական ասպարիզում մեծ գործ են կատարում և դպրոցներում այս կամ այն պաշտօններն ունին։ Մի մասն էլ բարձրագոյն դպրոցներում են պաշտօնավարութիւն անում։ Ամերիկուհին մասնակցում է նոյնակէս զանազան պետական և հասարակական պատշտօններում, նոցա կարելի է տեսնել դատարաններում, տուետրական կրպակներում, գանձարաններում, գրադարաններում, բանտերում, այս կամ այն ընկերութիւններում, ևալին ևալին։ Նրանք ծառայում են նոյնակէս պօստ-հեռագրատներում, քարոզում և եկեղեցական պաշտօն են կատարում։ օրինակ կվակերների մէջ մօտ 250 քարոզչուհի են հաշում։ 1880 թուին կանալք 166 եկեղեցական ամբիոններ ունեին։ Դրականական ասպարիզում ևս ամերիկուհին իր քոյլը ևրոպացուհուց լետ չէ մնացել։ այդտեղ ևս կան կին հեղինակներ, լայտնի վիպասաններ։ Եւրոպայում պարբերական հրատարակութիւններին շատ քչերն են մասնակցում, այն ինչ Ամերիկայում բազմաթիւ մասնակցողներ և խմբագրուհիներ կան։ Հասարակապետութիւն հաստատելուց առաջ, այնտեղի 38 լրագիրներից 16-ը կանալք էին հրաժարակում։ կին խմբագրներով։ Սրանք ամենքն էլ ազատութեան պաշպան էին։ Բժշկական և իրաւաբանական ասպարէզները կանալք բաւականին դժուարութեամբ ձեռք բերին։ Կոսնանց բժշկութեան իրաւունք ձեռք բերելու գլխաւոր պատճառաբանութիւնն այն էր, որ ենթադրում էին,

թէ նրանք մարդակազմութեան հետ ծանօթանալով՝ փափկասրութիւնը և որ գլխաւորն է ամօթխածութիւնը կը կորցնեն։ Սրա հակառակ կանանց դատը պաշտպանողները պնդում էին, թէ մարդիկ գործ ունենալով ծննդականների հետ, կանանց ամօթխածութեան պակասելու պատճառ են լինում։ Այս կարծիքին միացան և ուրիշները, և 1850 թ. Ֆիլադելֆիայում կանանց առաջին բժշկական կօլէջը բացուեցաւ, ապա բացուեց Բոստոնում։ Բայց այս կօլէջները կտրծես գեռ. տեսականալէս գոլութիւն ունէին, գործնական կեանքի մէջ գեռ նրանք այն նշանակութիւնը չունէին, քանի որ գրա համար նպաստաւոր պայմաններ չկային։ Այս բանի համար կանալք ընդհանուր ուժերով աշխատեցան և վերջիվերջոյ հասան իրանց նպատակին։ Ելիզաբէթ Բլէկելը կանգնեց այս գործի գլուխը, և ոչ միայն կանանց բժշկական կօլէջ բացեց, ալլև հիւանդանոց իր ամեն լարմարութիւններով։ Այսպէս տեսականը միանալով գործնականի հետ, ամեն թերութիւն լրացրեց։ Այսպէս քանի գնում, կանանց բժշկական կօլէջների և հիւանդանոցների թիւը շատանում էր, կանոնները խըստանում և լուրջ ուշադրութիւն էին դարձնում ծրագրների վրայ։ Ժամանակ առ ժամանակ ամենանշանաւոր ուսուցչապետների ներկայութեամբ քննութիւններ էին նշանակում և դասընթացների տեսողութիւնը հետզհետէ երկարացնում էին։

Ներկայումս այս հարցն արդէն վճռուած է և բժշկական ընկերութիւնների մէջ կին բժիշկն անհրաժեշտ տարր է համարւում և ամեն մի բժիշկ հարկաւոր գէպքում նրանց հետ ուրախութեամբ խորհուրդ է անում։ 1880 թուին կին բժիշկների թիւը Միացեալ Նահանգներում հասնում էր 2,432-ի, իսկ մինչև ալժմ իհարկէ տւելի շատ կը լինի։ Անդամակատութեան մէջ ևս կանալք լետ շեն մնացելու նրանցից ոմանք մեծ համբաւ ստացան։ Ոչ պակաս դժուարութիւնների պատահեցին իրաւաբանական իրաւունք ձեռք բերելիս նոյն պատճառաբանութիւնները, նոյն հակակրութիւնը, նոյն արգելքներն ալստեղ ևս առաջացան։ Ի՞նչպէս կարելի է կնոջը թոյլ տալ զանազան անառակնե-

րի, աւազակների, անբարոյականների հետ գործ ունենալ: Կինը՝ որ ունի փափուկ սիրտ, մաքուր զգացումներ, միթէ ալդ անգնահատելի զգացումնեղը պիտի կորցնէ և խստանայ, փշանայ ու դաժան դառնալ: Ահա ալսպիսի պատճառաբանութիւններով ընդդիմանում էին կանանց ձգտումներին: Չնայելով այս աշկարար հակակրութիւններին, կանայք չթուլացան և պատերազմելով այս նախապաշարումների դէմ յաղթող հանգիստացան: Ալստեղ ևս նրանք ցոյց տուին՝ որ կանանց ընդունակութիւնները տղամարդուց պակաս չեն. և նրանց միջից շատ նշանաւոր իրաւաբաններ դուրս եկան:

Հարիւրաւոր օրինակներ են պատահել՝ որտեղ կանայք իրանց հակառակորդ տղամարդու պաշտպանած դատը տարել են: Նրանք ալդ ամենը կատարել են մեծ հանդարտութեամբ, առանց լուզմունքի, և ամեն դէպքում ցոյց են տուել, որ օրէնքը լաւ ուսումնասիրել են և հմուտ են: Կանայք մասնակցում են նոյնպէս իրաւաբանական գրականութեան և մամուլի մէջ: Տըղամարդ իրաւաբանները ներկայումս կին իրաւաբաններին մեծ յարգանքով են ընդունում իրենց ընկերութիւնների մէջ: Նոյն յարգանքն են վայելում դատաւորների և դատարանական ծառալողների կողմից:

Եթէ մենք մի ընդհանուր հայեացք ձգենք մեր բոլոր ասածների վրայ, կը տեսնենք, որ ամերիկուհին բոլոր հասարակական ասպարէզներում տղամարդկանց հետ հաւասար չափով գործել և գործում է: Խսկ եթէ յիշենք կանանց ամենամեծ և գլխաւոր գործունէութիւնը, այն է՝ բարեգործական ասպարիզում կատարած յառաջադիմութիւնը, այն ժամանակ ճշմարիտ որ պէտք է յարգանքով ու պատկառանքով վերաբերուենք մարդկութեան ընդհանուր ցաւերի վըրայ հոգացող զգայուն և բարեսիրտ կնոջը: Խնչպէս օրինակ կանայք ունին գիտմակալութիւն տարածող ընկերութիւնն, որը 200,000-ից աւելի անդամ ունի և ամեն մի նահանգում էլ բազմաթիւ ճիւղեր: Ալդ ընկերութիւնը մեծ քանակութեամբ գրքուկներ և լրագրներ է հրատարակում:

Սլովակիաներից մէկը «Union signal» 80,000-ից աւելի բաժանորդ ունի: Նոյնպէս շատ մեծ է կանանց գործունէութիւնը նեգրերի ազատութեան, «Կարմիր խաչ» ընկերութեան կազմակերպութեան, որբանոցների, չքառորներին օգնելու, բանտարկեալներին խնամելու և ուրիշ շատ ու շատ բաների մէջ: Իհարկէ այս քան բարեգործութիւններ կատարելու համար միայն փողը բաւական չէ, այլ սրա հետ պէտք է ունենալ ընդարձակ կրթութիւն, հասկացողութիւն, որ ամեն ինչ հաստատուն կերպով լառաջ տանէին: Միայն ընտրողական ձայն ունենալու մէջ ամերիկուհին մարդուց պահան է, այս բանի համար նրանք ժաշխատել և աշխատում են: Սրա համար նրանք կրիւ ունեցան դեռ 1840-ական թուականներին, երբ Լօնդոնում ստրկատէրերի համար համաշխարհալին կօնդրէս կազմուեցաւ: Ամերիկայի պատգամաւորների թւում կալին և մի քանի կանալք, թէև նրանց չընդունեցին կօնդրէսում, և այս առաջին փորձն տնյաջող անցաւ, բայց 1848 թուին կանալք մի ուրիշ կօնդրէս կազմեցին, ուր իրանց պահանջները հրատարակ հանեցին: Նրանք պահանջեցին իրաւունքների հաւասարութիւն՝ համալսարաններում, առևտրական գործերում, աշխատանքի մէջ. նոյնպէս ձայն ունենալու իրաւունք հասարակական և պետական պաշտօններ, կենսաթոշակ և պարգևներ ստանալու մէջ, նոյնպէս ամուսնութեան իրաւունքների հաւասարութիւն, սեփականութեան ու աշխատանքի վարձատրութեան հաւասարութիւն, և վերջապէս դատարանական գործերում պայմաններ կապելու մէջ, և այլն:

Այս կօնդրէսին հետևեցին մի շարք ուրիշ կօնդրէսներ, և ժամանակի ընթացքում ճնշելով հասարակաց կարծիքը, շատ տեղերում հասան իրենց ցանկացածին:

Համարեա բոլոր նահանգներում կանալք ստացան ընտրողական ձայն ունենալու իրաւունք դպրոցական ընկերութիւնների, ժողովների մէջ. իսկ այս հանգամանքն Ամերիկական նոր սերնդի կրթական գործում մեծ նշանակութիւն ունի: Կանզաս նահանգում նրանք մասնա-

կցում են նոյնպէս քաղաքալին ընտրութիւնների մէջ։ Վիօմօնդ նահանգում արդէն 20 տարի է, որ կանայք տղամարդկանց հաւասար իրաւունքներ ունին քաղաքական գործերի մէջ։

Այս ամենը ցոյց է տալիս, որ Ամերիկուհին իր ոլիգի և եռանդի շնորհիւ ամեն բանի հասաւ։ Ճիշտ է՝ նա իր արտօնութիւններ ձեռք բերելու մէջ պարտական է նոյնպէս պատմական և հասարակական կեանքի զարգացմանը, բայց գլխաւորապէս նա իրաւունք ունի պարծենալու իր անչափ եռանդով, յառաջ գնալու ձըգտումներով ու ցանկութեամբ։ Նա իրաւունք ունի հպարտանալու, որ արժանաւոր նախնիքների օրինաւոր ժառանգուհին է և ստացածը շահեցնելով՝ անդադար յառաջ ու յառաջ է գնացել, և ալսօր շատ պատուաւոր ու նախանձելի գրութեան վերայ է կանգնած։

Ներկայ Ամերիկուհին աւելի բաղդաւոր է իր քոյր Եւրոպուհուց, և վերջինս դեռ նրանից շատ բաների մէջ օրինակ պիտի առնէ։

Կանանց ղրութիւնը Փինլանդիայում։

Եթէ Փինլանդացի կնոջ հասարակական, քաղաքական պարմաններն ի նկատի ունենանք և եւրոպացի կը նոյնու հետ համեմատենք՝ պարզ կը տեսնենք, որ Փինլանդուհին աւելի ազատութիւն է վալելում և շատ բանի հասել՝ քան եւրոպուհին։

Ֆինլանդիայում, օրէնքը կնոջ իրաւունքները մի քանի բաների մէջ սահմանափակում է և նրա վրայ նայում է այնպէս՝ ինչպէս անչափահասների վրայ։ Այսպէս օրինակ, երբ կինն ուղենայ պետական դպրոցներում տեսչուհու պաշտօն ստանալ, համարսարան մըտնելու իրաւունք ունենալ, կամ փաստաբանութեամբ պարապել՝ գրա համար պէտք է տռանձին իրաւունք ստանալ։ 1864-ից սկսած, Փինլանդուհու քաղաքացիական իրաւունքներն սկսում են հետզհետէ ընդլայնուել։ ըսկզբներում նրանց տուին մի քանի սեփականութեան իրաւունքները ինչպէս — 15 տարեկանից աղջիկը իրաւունք ունի իր սեփիհական աշխատանքի վրայ, — իսկ 21 տարե-

կան հասակում՝ իր ունեցուածի վրայ։ Այս օրէնքը ա-
մուսնացած կնոջը չէր վերաբերում։ Նա դարձեալ ա-
մուսնու հոգաբարձութեան տակ է մնալու։

1865 թ. նա իրաւունք ստացաւ մասնակցել գիւ-
ղական, հասարակական կառավարութեան մէջ։ 1873-
ին նոյնը ստացաւ քաղաքներում։

Վերջին երեսուն տարիների ընթացքում Ֆինլան-
դուհին շատ լտուաց գնաց և դրական կերպով ապա-
ցուցեց իր ընդունակութիւնը և օգտակարութիւնը հա-
սարակական ամեն տեսակ գործերի մէջ։ Նա պաշտօն-
ներ է վարում դպրոցներում, ճեմարաններում, ար-
հետանոցներում, լրագրատներում, փոստատներում,
հիւանդանոցներում, երկաթուղիների վրայ, նաև բը-
ժշկուհի է և վաճառական և գործող։ Վերջապէս նա
իրաւունք ստացաւ այլ մարդու հետ հաւասար ու-
սում ստանալ։ Դրականութեան և գեղարուեստի մէջ
նրա նշանակութիւնը բարձրացաւ. այդ օրից Ֆինլան-
դուհին ընկերութիւնների, ժողովների մէջ՝ հետզհետէ
լարգելի տեղ բռնեց։ Դեռ քառասնական թուականնե-
րին կանալք բազմաթիւ բարեգործական ընկերութիւն-
ներ ունեին – իսկ ներկայումս այդ ընկերութիւնների
թիւն աւելի շատ է։ Նշանաւոր Նվերացի կին հեղինակ
էլլէն Զէլ – Ֆինլանդուհուն արսպէս է բնորոշում. «Ոչ
միայն նրա արտաքինը առողջ, կենդանի, խելացի և վա-
յելուշ է հիւսիսում ապրող միւս ազգերի կանանցից –
այլև այդ ամենի հետ Ֆինլանդուհին ունի մեծ հոգե-
կան ոյժ, հասարակական ոգի, կենդանի հետաքրքրու-
թիւն դէպի քաղաքական հարցերը, բուռն սէր դէպի
հալլբենիք և, մի խօսքով այնպիսի լատկութիւններ, ո-
րոնցով նա դառնում է տղամարդու հաւատարիմ և ճըշ-
մարիս ընկերը»։

Դեռ 1860-ական թուականներին էր, որ Ֆինլան-
դացի կնոջն իրաւունք տրուեցաւ քաղաքալին ձախա-
ւորի, քահանաների և քաղաքալին բժիշկների ընտրու-
թիւնների մէջ։ 1894 թ. օրէնքով որոշուած ցենզ ու-
նեցող կանալք իրաւունք ստացան քաղաքական պաշ-
տօնների համար ընտրուել և այդ էլ նրա համար, որ
դրանով մի որոշ պահպանողական ոյժ մտցնեն քաղա-

քական դործերում:

Միխելինի առաջարկութեամբ, տնտեսական լանձնաժողովների անդամների մեծամասնութիւնը ընդունեց այն հարցը, որ կանալք աղամարդկանց հաւասար իրաւունքներով կարող են քաղաքացիական պաշտօնների համար ընտրուել: Միևնույն ժամանակ պահանջողներ կալին, որ ընտրուելուց լետոյ՝ կանալք իրաւունք չունեն հրաժարուելու, այլ պարտաւոր են անզատճառ ընդունել. այսպիսի դէպեքերում կանանց հրաժարականը կը լարգուի միայն այն դէպքում, ինչ պատճառով որ իրաւունք ունի հրաժարուել տղամարդք: Այս բանին շատերը հակառակեցին, պատճառառանելով՝ թէ երբեմըն կանալք այնպիսի դրութեան են լինում, որ իրաւունք ունեն հրաժարուել. այս առաջարկութիւնը ձայների մեծամասնութեամբ ընդունուեց՝ թէև հոգեւորականութիւնը և ազնուականութիւնը հակառակուեց: Այսօր Ֆինլանդուհին կարող է պարծենալ իր ազատութեամբ: Այս բաներին նա հասաւ իր սեփհական եռանդով և ձգտումներով: Արա համար անշուշտ նրան շատ օգնեց իր կրթութիւնն ևս: Ֆինլանդուհին դեռ փոքր հասակում, տղաների հետ միասին սովորում է—նա շարունակ շփում է երիտասարդների հետ համալսարանում, իր ուսանողութեան ժամանակաշամարդում, աղամարդանում են նրա տատերի: մայրերի ազատութիւն ազդեցութիւնն—ահա սրանց շնորհիւնը մէջ հաստատուն կերպով առաջ է գալիս լրջութիւն, գիտակցութիւն և ուժեղ կոիւ կանանց բարեկեցութեան համար: Խսկապէս էլ, նրանք հասան իրանց նըպատակին:

Ա. ԶԻԼԻՆԵԱՐԵԱՆ